



Գործնական հանդիդում Բնապահպանության նախարարությունում


Վարչապետը ծանոթացել է ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թ. գործունեությանը և տվել հանձնարարականներ

Վարչապետ Կարեն Կարապետյանն Փետրվարի 6-ին այցելել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ ծանոթանալու 2017 թ. գերակա խնդիրների կատարման և միջոցառումների հրականացման արդյունքներին, ինչպես նաև 2018 թ. անելիքներին: Նախարար Արծվիկ Մինասյանը գեկուցել է, որ 2017 թ. կառավարության գործունեության ծրագրով նախատեսված 21 միջոցառում հրականացվել է սահմանված ժամկետում, 17-ի վերաբերյալ կա արդեն կառավարության համապատասխան որոշում, 4-ը շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկման փուլում են: 9 գերակա խնդիրներից 7-ն հրականացվել է սահմանված ժամկետում, իսկ 2-ի վերաբերյալ ՀՀ կառավարություն են ներկայացվել որոշման նախագծեր: Սահմանված կարգով ընդունվել է նախարարության կողմից մշակված 52 իրավական ակտ: 2017 թ. էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծավալը 2016 թ. 41,6 տոկոսից հասել է 60 տոկոսի, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը 180 օրից կրճատվել է 50 օրի: Արծվիկ Մինասյանը ներկայացրել է 2017 թ. ՀՀ մակերևության ջրային օբյեկտների որակի և հայաստանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի

արդյունքները: Սևանա լճի ջրի որակն էական փոփոխության չի ենթարկվել, և արձանագրվել է լուրջ ձեռքբերում՝ թափանցիկությունը 13 մ է հասել. նման ցուցանիշը բնորոշ է եղել մինչև խորհրդային ժամանակաշրջանում ջրի բացքողման սկիզբը: Որոշ տեղերում ռիսկային ցուցանիշներ են գրանցվել: Վարչապետ Կարապետյանն ընդգծել է, որ եթե մշտադիտարկումների արդյունքում արձանագրված ցուցանիշները և վիճակագրությունը որոշակի մտահոգիչ ազդակներ են հաղորդում, ապա իրավիճակը փոխելու համար պետք է ընդունվեն համապատասխան գործողություններ իրականացվեն: «Պետք է հստակ որոշել քայլերի հաջորդականությունը, որպեսզի մոնիթորինգն ինքնանպատակ գործընթաց չլինի: Չե՞ որ մոնիթորինգ իրականացնում ենք, չափում ենք, որ ինչ-որ բան փոխենք», - ասել է կառավարության ղեկավարը՝ հանձնարարելով բնապահպանության նախարարին տեղեկատվությունների կայացմանը 2014-2017 թթ. մշտադիտարկումների արդյունքների հիման վրա ձեռնարկված քայլերի, միջգերատեսչական աշխատանքի վերաբերյալ:

• Գործնական հանդիպում Բնապահադանության նախարարությունում

Սկիզբ՝ էջ 1 /




Բնապահադանության նախարարի առաջին տեղակալ էրի Գրիգորյանը գեկուցել է 2017թ. շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միջազգային համագործակցության, դրամաշնորհների և Հայաստան-Եվլամբիություն համագործակցության մասին։ Կանաչ կլիմայի հիմնադրամի հետ կնքվել է ավելի քան 20 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհի պայմանագրեր, իրականացվում է 22 բնապահպանական Կոնվենցիաների և արձանագրությունների սպասարկում, որոնցից 8-ի վերաբերյալ պարբերաբար ներկայացվում է տեղեկատվություն «GSP+» առևտրային ռեժիմի ընթացիկ դիտանցի շրջանակում։ Բանակցություններ են ընթանում Գերմանական զարգացման KfW բանկի կողմից 21.7 մլն եվրո գումարի չափով կենսաբազմազանության և անտառների ոլորտի աջակցման դրամաշնորհի և FAO-ի հետ 28 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհի վերաբերյալ, «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան» աջակցություն է ցուցաբերվել 32 համայնքի, իրականացվում է դրամաշնորհային միջոցները բյուջե ուղղելու գործընթաց, կատարվում է ԵՄ-ՀՀ ասոցացման համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 8 տարում ՀՀ բնապահպանական և կլիմայական 3 տասնյակ կարգավիրումների մոտարկում և այլն։ Կարելով դրամաշնորհների ծախսման արդյունավետության և հասցեականության բարձրացումը՝ Կարեն Կարապետյանն ընդգծել է, որ յուրաքանչյուր ծրագիր, այդ թվում դրամաշնորհային, պետք է կիրառական արդյունք տա։ Նա հանձնարարել է գույքագրել դրամաշնորհներ տրամադրող առկա ու պոտենցիալ բոլոր գործընկերներին, և առարկայական աշխատել նպատակային համագործակցության զարգացման ուղղությամբ։ Նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը ներկայացրել է 2017 թ. էկոտուրիզմի ոլորտում ընթացիկ ցուցանիշները և 2018 թ. անելիքները։ Զեկուցվել է, որ 2017 թ. ընթացքում բնության հատուկ պահպանվող տարածքներ այցելել է 549128 զբոսաշրջիկ (2016 թ. համեմատ՝ 492244), որի արդյունքում ստացված եկամուտը կազմել է 226,77 մլն դրամ (2016 թ.՝ 179,40 մլն դրամ)։ Հայաստանի բնության թան-

գարանում տեղադրվել է Էկոտուրիզմի տեղեկատվական տաղավարը, որը 2018 թ. կիյուրընկալի գրոսաշրջիկներին։ Կառավարության ղեկավարը նշել է, որ գրոսաշրջության զարգացման առումով պետք է ավելի հավակնութափատակ դնել և ավելի լուրջ ցուցանիշների հասնել հաշվի առնելով մեծ ներուժի առկայությունը։ Այս համատեքստում վարչապետ Կարապետյանը համձնարարել է շարունակել աշխատանքը «Սևան» ազգային պարկի բարեփոխումների և զարգացման ռազմավարության մշակման շուրջ, ինչպես նաև ներկայացմել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի զարգացման ծրագիր։ Խաչիկ Հակոբյանը տեղեկատվություն է ներկայացրել Արարատյան դաշտավայրի ջրային ռեսուրսների ոլորտում իրավիճակի և զարգացումների վերաբերյալ։ 2017 թ. լուժարվել է 1, կոնսերվացվել է 16 և փականային ռեժիմի է բերվել 150 հորատանցք, ինչի արդյունքում խնայված ջրաքանակը կազմել է շուրջ 4952 լ/վ, որը տարեկան կազմում է շուրջ 156 մլն/խմ։ Միայն ծկնաբուծական տնտեսությունների մասով արձանագրվել է 23 տոկոս ջրախնայողություն։ Վարչապետին գեկուցվել է նաև անտառային ոլորտի բարեփոխումների ընթացքի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային փոփոխությունների մասին։ Կարեն Կարապետյանը նշել է, որ նախարարության կառավարման ոլորտում գտնվող ՊՈԱԿ-ները, բացի սահմանված գործառույթներից, պետք է նաև բիզնես բաղադրիչ ունենան և եկամտաբերություն ապահովեն։ «Ամեն ՊՈԱԿ-ի տնօրեն պետք է իր համար հորիզոն ունենա՝ ինչ է անում։ Եթե իմքը շուկայում տեղ գրավելու հնարավորություն ու ներուժ ունի, մենք իրեն հստակ ասում ենք, թե որ ուղղությամբ շարժվի», - ասել է կառավարության ղեկավարը։ Անդրադառնալով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բարեփոխումներին՝ վարչապետը նշել է. «Սենք տրամադրված ենք ու Հայանտառ»-ն անպայման դարձնելու ենք շահութաբեր, ուժեղ կառույց, ընդ որում շահութաբեր, ուժեղ կառույց դարձնելու դեպքում բնապահպանական որևէ նորմ չի խախտվելու»։



ԱՆԱԽԱԴԵՄ ՀԱՄԱԳՐԾԱԿցՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԿԱՐՈՒ Է ՃԱՎՈՒԵԼ ԱՆՐ ՄՇԱԿՈՒՅԹ ՄԵՐ ԵՐԿԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԳԱԵՐԻ ՀԱՆԴԵՄ



ԲՆԱՊԱՀԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ և «Գագիկ Շառուկյան» բարեգործական հիմնադրամի միջև ստորագրվել է համագրութակցության հուշագիր

Փետրվարի 9-ին «Մոլուղ գրանդ հյուրանոց» համալիրի կոնֆերանսների դահլիճում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և «Գագիկ Շառուկյան» բարեգործական հիմնադրամի միջև ստորագրվել է համագրութակցության հուշագիր: Հուշագիրը ստորագրել են բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը և «Գագիկ Շառուկյան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Գագիկ Շառուկյանը:

Ողջունելով ներկաներին և կարևորելով հուշագրի ստորագրումը՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը նշել է: «Երկույքն աննախադես է և մեր երկրում կարող է ծանալու մի մշակույթ, որին, նույնիսկ շատ զարգացած երկրներ կարող են հետևել և կիրառել այս: Մեր երկրն իր տարածքով զիշելով այլ երկրներին, կենսաբանագույնության արումնով չափազանց մեծ կշիռ ունի: Միայն այն, որ բուսական և կենդանական աշխարհի բազմահազար ներկայացուցիչներ մեր այս փոքր երկրում առկա են, խոսում է այն մասին, որ մեր բնությունը, բնական միջավայրը լիարժեք պահպանելու լուրջ խնդիր ունի: Չափազանց կարևոր է, որ Հանրապետության նախագահի հանձնարարականին, այն է՝ շրջակա միջավայրը բարելավելու և բնությունը պահպանելու ծրագրեր իրականացնել, իր դերակատարությունն է առաջարկում հայտնի գործիք Գագիկ Շառուկյանը: Եթե ծանոթանում են այն գործերին, որ պարունակությանը հարականացնելու է այդ ոլորտում, այն ներդրումներին, այն սրտացավ մոտեցումներին և վերաբերնունքին, դրանք վստահություն են ներշնչում, որ այն կարող է դառնալ շատ լավ օրինակ ապագայում մեր այն հայրենակիցների համար, ովքեր ունեն ցանկություն, հնարավորություն, կամ սեր՝ բնության հանդեպ: Այս նախաձեռնության նպատակը ոչ միայն այն է, որ կարողանանք հանրաճանաչ դարձնել մեր բնության իրաշքներն, այլև առաջին հերթին պահպանել այն», նշել է Ա. Մինասյանը և նկատել, որ համագրութակցությունը տեղափոխվում է այնպիսի հար-

թություն, որտեղ իրավական ակտերով կամրագրվեն բնության հասուլ պահպանվող տարածքներ, որանցում կգործեն հստակ կանոններ, որպեսզի ապօրինի որսը, կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ ոտնձգությունները բացառվեն: Բնապահպանության նախարարը համագրութակցությունը կարևորել է նաև էկոտուրիզմի զարգացման և տղիալ-տնտեսական խնդիրների լուծման առումով:

«Գագիկ Շառուկյան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Գագիկ Շառուկյանը, շեշտելով ՀՀ բնապահպանության նախարարի հետ արդյունավետ փոխգործակցությունը, հայտնել է, որ համագրութակցության հիմնական նպատակը կենդանական և բուսական աշխարհիվ հարուստ ավելի շատ տարածքներ պահպանելը է: Այդ նպատակներին հասնելու համար Հիմնադրամը պատրաստ է աջակցել ցանկացած ծրագրի, իսկ խնդիրի լուծման գործընթացում լիարժեք արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է զանցերի մեկստեղում:

Հուշագրով նախատեսվող համատեղ գործողությունները կնախատեն շրջակա միջավայրի պահպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, նոր բնության հասուլ պահպանվող տարածքների ստեղծմանը, էկոտուրիզմի զարգացմանը և վերահսկողության ուժեղացմանը՝ ներդնելով տեխնիկական և ֆինանսական միջոցներ, մարդկային ռեսուրսներ, մասնագիտական գիտելիքներ:

Հուշագրի կողմերի ուժերով կմշակվեն և կիրագործվեն բնապահպանական ուղղվածություն ունեցող ծրագրեր, որոնց համար հիմնադրամը կցուցաբերի աջակցություն (այդ թվում՝ ֆինանսական): Այդ ծրագրերի շրջանակներում նախատեսվում է հզորացնել բնապահպանության նախարարության և բնապահպանական վերահսկողություն իրականացնել մարմնի տեխնիկական կարողությունները: Աշխատանքներ կտարկվեն նաև ստեղծվող կամ գործող բնության հասուլ պահպանվող տարածքների կառավարման մեխանիզմների կարողությունների զարգացման ուղղությամբ: Կողմերը պարբերաբար միմյանց կտեղեկացնեն ծրագրերի մշակման, իրականացման և մոնիթորինգի վերաբերյալ, կանցկացնեն հանդիպումներ՝ քննարկելու համար Հուշագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների կատարման ընթացքն ու ծրագրավորելու համար հետազ անելիքները: Որպես համագրութակցության առաջին քայլ Հիմնադրամը բնապահպանության նախարարությանը նվիրեց 10 «Նիվա» մակնիշի ավտոմեքենա:

Զրին Երկրորդ կյանք կտրվի

«Հայոց աշխարհի» հարցագրույցը Բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուլսների կառավարման գործակալության պետ ՎԱՐԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ հետ:



-**Բնապահպանական ոլորտում վերջին տարիներին խնդրահարույց թեմաներից է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի անխնա օգտագործումը ձկնաբուծության նպատակով: Ի՞նչ ծրագրեր են իրականացվում իրավիճակը շտկելու ուղղությամբ:**

-Դեռևս 2007թ. կառավարության որոշմամբ Արարատյան դաշտում ձևավորվեցին ձկնաբուծարաններ՝ Հայաստանում ձկնաբուծությունը զարգացնելու նպատակով: Սակայն հետագա տարիներին պարզվեց, որ ծրագիրը բացասաբար է անդրադառնում այդ տարածքի ստորջրյա ավազանի ջրերի վրա, քանի որ անվերահսկելի և մեծ քանակությամբ ջրառ էր իրականացվում, և ջրի պաշարը չէր հասցնում վերականգնվել:

Քանի որ վերահսկողությունը թույլ էր, ոչ արդյունավետ, տնտեսավարողները ջրօգտագործման համար սահմանված թույլատրելի ծավալից ավելի շատ ջրառ էին իրականացնում: Անխնա օգտագործումն էլ հանգեցրեց նրան, որ ջրային պաշարներն այդ տարածքում կտրուկ նվազեցին, և այն վերականգնելու իրատապ ծրագրերի, միջոցառումների անհրաժեշտություն առաջացավ:

Նախարարությունն այդ ծրագրերը գործարկել է դեռ 2014 թվականից, և ինմա արդեն տեսանելի արդյունքներ ունենք: Չնայած Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային պաշարներից ջրառն այժմ տարեկան 1,5 մլն խմ է, բայց ջուրն այնպիսի ծավալներով է վերականգնվում, որ մեր հիդրոերկրաբանական մշտադիտարկման արդյունքներով՝ ստորերկրյա ջրերի պաշարների կայունություն է նկատվում, շատ հատվածներում անգամ դիմանիկ աճի միտում կա: Դա փաստում են նաև ձկնաբույժները և Արարատյան դաշտի բնակիչները: Եթե նախկինում շատ հորատանցքեր կորցրել էին ինքնաշատրվանման հատկությունը, այժմ դա վերականգնվում է, ինչը լավատեսական հույսեր է ներշնչում:

-Ի՞նչ կոնկրետ քայլեր են արվել ջրի ծավալները վերականգնելու համար:

-Նախ լուծարվել է մեկ խորքային հոր՝ 60 լիտր վայրկյան ջրատվությամբ, 16 խորքային հորեր կոնսերվացվել են, ժամանակավորապես փակվել են, մինչև նորից կօրացվեն և արդեն կօգտագործվեն ոռոգման նպատակով:

Այս տարի նախարարության աշխատակիցները ձկնաբուծական տնտեսությունների խորքային հորերի հաշվառում, գույքագրում, ջրաչափություն, կապարակնքման աշխատանքներ են իրականացրել, և այն ձկնաբուծական տնտեսություններին, որոնք թույլատրելից ավելի շատ ջրառ են կատարել, պարտադրել ենք, որպեսզի ջրառը հասցնեն սահմանային թույլատրելի չափարանակի:

Բոլոր գոծողությունների շնորհիվ 2017թ. խնայվել է մոտ 5000 լիտր վայրկյան ջրաքանակ, ինչը կազմում է ձկնաբուծության համար Արարատյան դաշտում օգտագործվող ջրային ծավալների 23 տոկոսը:

Մարդկային գործոնը նվազեցնելու, ձկնաբուծական տնտեսությունների ճիշտ հաշվառում իրականացնելու համար խորքային հորերում նաև տեղադրել ենք առցանց հոսքաչափեր, որոնց միջոցով իրական ռեժիմում ուզածդ ժամանակ և ուզածդ վայրից կարողանանք վերահսկել տնտեսավարողների կողմից օգտագործվող ջրային ծավալները:

-Քանի՞ ձկնաբուծական տնտեսություն է գործում այդ տարածքում:

-Գույքագրված 239 ձկնաբուծարանից 124 տնտեսությունն է գործող: Մյուսները չեն գործում՝ կամ ջոօգտագործման թույլտվություն չունենալու, կամ այլ պատճառներով: Գործող տնտեսություններն ընդհանուր առմանը օգտագործում են մոտ 21 000 լիտր վայրկյան ջրածավալ, ինչը տարվա ընթացքում կազմում է մոտ 664 միլիոն ջրածավալ:

2016թ. այդ թիվը կազմում էր 809 միլիոն խմ: Այսինքն մեկ տարվա ընթացքում կարողացել ենք մնացորդը խնայել և այդ ուղղությամբ աշխատանքները շարունակական են:

-2017թ. հաշվետու ասուլիսում Բնապահպանության նախարարը խոսեց նոր ծրագրի մասին, որով նախատեսվում է ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջուրը հետագայում ոռոգման համար կիրառել՝ այդպիսով ոռոգման ջուրը խնայելու հնարավորություն ստեղծելով: Իրատեսակա՞ն է այդ ծրագիրը, փորձարկումներ արվել են:



• Զրին Երկրորդ կյանք կտրվի

Ակհաբեք էջ 4 /

-Այս, պիլոտային ծրագիր է իրականացվել Արարատի մարզի Դայանիստ համայնքում: Ձևաբուժարանից հեռացվող հետադարձ ջրերը ուղղել են ոռոգման նպատակով: Մինչ այդ ջրի նմուշառում և փորձաքննություն է կատարվել՝ համոզվելու, որ այդ ջուրն իր քիմիական բաղադրությամբ անվճան է և համապատասխանում է ոռոգման համար սահմանված չափորոշիչներին:

Պատասխանը դրական էր, դրական էին նաև այդ ջրով ածեցված սեխի և ծմբերուկի՝ սննդի անվտանգության չափորոշիչներով լաբորատոր հետազոտության արդյունքները: Անգամ համայն հատկանիշներով այդ ջրով ածեցված գյուղաբերքը ոչնչով չի տարբերվում սովորական ոռոգման ջրով ածեցվածից, հատուկ դեգուստատորներն են դա փաստել:

Այսինքն ծրագիրն անվտանգ է և իրատեսական: Սակայն ուսումնասիրությունների խոր մասնագիտական վերլուծությունների, նախագծերի, հետազայում էլ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու, տեղադրելու համար մեծ ներդրումներ անհրաժեշտ կլինեն:

Նախնական հաշվարկներով այս նախագծի գործարկմանը հնարավորություն կա մոտ 2 000 լիտր վայրկյանում ջրային ծավալ ուղղել դեպի ոռոգման համակարգ, և փաստորեն այդքան ջուր կխնայվի ոռոգման համար նախատեսված ջրային ծավալներից: Գաղափարը արդյունավետ է, և մենք անպայման այն կյանքի կոչունք:

-Քանի որ խոսեցինք մեկ անգամ օգտագործված ջրին երկրորդ կյանք տալու մասին, անդրադառնանը արտադրական և այլ նպատակներով օգտագործված ջրով շրջակա միջավայրն աղտոտելու թեմային: Ինչո՞ւ նման տնտեսավարողների նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում՝ նրանց վնասակար գործունեությունը կանխելու, պատիժներ կիրառելու համար:

-Այս ոլորտում օրենսդրական բացերը շատ են, որոնք

ել նպաստում են բարձիթողի վիճակի առաջացմանը: Բայց շուտով հնարավոր կլինի նաև այդ ոլորտը կարգավորել: Բնապահպանության նախարարությունը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ մի շարք փոփոխություններ և լրացումներ է նախաձեռնել Զրային օրենսգրքում, որով կտարանջատվեն ջրամատակարարման և ջրահեռացման իրավահարաբերությունները:

Իսկ ջրահեռացմանը կնախատեսի ոչ միայն բուն այդ գործողությունը՝ ջրի տեղափոխումը, այլև ջրի տեղափոխումը մինչև մաքրման կայան, մաքրման գործընթաց և այնտեղից ջրի հեռացում դեպի շրջակա միջավայր կամ այն երկրորդային նպատակներով օգտագործող համապատասխան հիմնարկ: Անբողջ իմաստն այն է, որ ջուրը այնպես մաքրվի, որպեսզի այն հնարավոր լինի մեկ անգամ ևս օգտագործել այլ նպատակներով ընդհուպ մինչև ոռոգման համար: Զատուկ չափորոշիչներ կսահմանվեն երկրորդային նպատակով օգտագործվող ջրի համար:

-Որքանով տեղյակ եմ՝ մենք միայն մեխանիկական մաքրման կայաններ ունենք: Ինչպե՞ս է իրականացվելու ջրի խորքային մաքրումը, եթե համապատասխան սարքավորումներ չկան:

-Իրավացի եք: Զայաստանում գործում են միայն վեց մեխանիկական մաքրող կայաններ՝ Աերացիայում, Սևանի ավազանում, Զերմուկում և Դիլիջանում: Կարծում եմ, որ կենսաբանական մաքրման կայանների կառուցման համար ներդրումային ծրագրեր կստեղծվեն և նոր բիզնես միջավայր կձևավորվի:

Կենսաբանական մաքրման կայաններ կառուցելու դեպքում ներդրողը սպասարկման վարձից բացի նաև շահույթ կարող է ստանալ բիոգազի և պարարտանյութի վաճառքով գրաղվելով: Պարզապես դրա համար մաքրման կայաններին գուգահեռ նաև մաքրած աղբը վերամշակող գործարան է հարկավոր ստեղծել:

Թագուհի ԱՍԼԱՆՅԱՆ



Բնադրահղանության նախարարի հրամանը 2018 թ. Ննթացքում Հայաստանի ջրային տարածքներում արդյունա- գործական որսի չափաբանակները սահմանելու մասին



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, դեկա-
վարվելով «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով,
8-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի
Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի
N1237-Ն որոշման N1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը, սույն
թվականի հունվարի 19-ին ստորագրել է «2018 թվականի ընթացքում
Հայաստանի Հանրապետության ջրային տարածքներում արդյունա-
գործական որսի չափաբանակները սահմանելու մասին» հրամանը:
Հրամանով սահմանվել է.

1. Հայաստանի Հանրապետության ջրային տարածքներում (բացառությամբ ֆիզիկական և իրավաբանական
անձանց սեփականության իրավունքով պատկանող տա-
րածքների) 2018 թվականի ընթացքում սահմանել ար-
դյունագործական որսի հետևյալ կենդանատեսակները և
դրանց չափաբանակները.

1) Կարաս՝ ջրային բոլոր տարածքներում անսահմա-
նափակ,

2) Խեցգետին՝ Սևանա լճում մինչև 500 տոննա,

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չսահմանված
կենդանատեսակների կամ տարածքների դեպքում ար-
դյունագործական որսն իրականացնել բնության մեջ առ-
կա բնական կենդանական պաշարների հաշվառման
տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով դրանց օգտա-
գործման գիտականորեն իհմնավորված թույլատրելի
չափաբանակները: 2. Սահմանել, որ՝ 1) ձկան և խեցգետ-
ի արդյունագործական որսն արգելվում է իրականացնել
հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի
միջոցով, սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային
մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և
ցանցավանդակի չափը 100 մմ-ից պակաս (ցանցավան-
դակի կառուցողական քայլի չափը 50 մմ-ից պակաս)
ձկնորսական ուռկաններով (ցանցեր), 2) խեցգետնի
ձվադրման և բազմացման ժամանակահատվածում Սևա-
նա լճում խեցգետին որսը ժամանակավորապես դադա-
րեցվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

բնապահպանության նախարարի հրամանի: 3. Հայաստանի Հանրա-
պետության բնապահպանության նախարարության աշխատակազմի
կենսառեսուրսների կառավարման գործակալության պետին՝ 1) կենդա-
նական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի կնքման գոր-
ծնքացը կազմակերպելիս հիմք ըն-
դունել սույն հրամանի 1-ին կետում
նշված չափաբանակները և 2-րդ կե-
տով նախատեսված բնության մեջ
առկա բնական կենդանական պա-
շարների հաշվառման տվյալների
հիման վրա գիտականորեն հիմնա-
վորված թույլատրելի չափաբանակ-
ները: 2) Սևանա լճում իշխան և սիգ
ձկնատեսակների ձվադրման ժամա-
նակահատվածում՝ ձկների բնական
վերարտադրությունն ապահովելու
նպատակով, կենդանական պաշար-

ների օգտագործման մասին պայմանագրերի գործողության ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի նոյեմբերի 20-ը, 3) կենդանական պաշարների օգտագործման մասին պայմանագրերում նախատեսել դրույթ, համա-
ծայն որի՝ կենդանական պաշար օգտագործողը պար-
տավորվում է սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակե-
տով սահմանված ժամանակահատվածում դադարեցնել Սևանա լճում խեցգետնի որսը, 4) կենդանական պաշար-
ների օգտագործման մասին պայմանագրերում նախա-
տեսել դրույթ, համաձայն որի՝ կենդանական պաշարնե-
րի օգտագործման պայմանագրով նախատեսված կեն-
դանատեսակների քանակության 10-12 %-ի չափով
վճարվում է բնօգտագործման վճար՝ տվյալ ջրային տա-
րածքում հնարավոր այլ ձկնատեսակներ որսալու հա-
մար: 4. Հայաստանի Հանրապետության բնապահպա-
նության նախարարության աշխատակազմի բնապահ-
պանության և ընդերքի տեսչական մարմնին առաջար-
կել՝

1) սահմանված կարգով վերահսկողություն իրակա-
նացնել սույն հրամանի 1-ին կետով սահմանված տա-
րածքներում,

2) ուժեղացնել վերահսկողությունն իշխան, սիգ և կո-
ղակ ձկնատեսակների ապօրինի որսի և վաճառքի կան-
խարգելման ուղղությամբ՝ համագործակցելով Հայա-
ստանի Հանրապետության իրավապահ մարմնիների հետ:



Շքակա միջավայրին հասցեած վնասը հաշվարկվել է շուրջ 764.660 դրամ

բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ս.թ. հունվարի 29-ից փետրվարի 2-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել և արձանագրվել է թվով 13 իրավախստում, 4-ի վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 200.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախստման հետևանքով շրջակա միջավայրին հասցեած վնասի չափը կազմել է 764.660 ՀՀ դրամ:

Մասնավորապես՝

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախստման 7 դեպք:

Քննված վարչական վարույթներով հաշվարկվել է 764.660 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցեած վնաս, որից՝

Տափուշ՝ ապօրինի ծառահատման 1 դեպքով (1 հաճարենի) հաշվարկվել է 487.500 ՀՀ դրամի չափով, որի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին: Վառելափայտի ապօրինի տեղափոխման 3 դեպքով (5.3 խմ վառելափայտ) հաշվարկվել է 76.260 ՀՀ դրամի չափով:

Լորի՝ ապօրինի ծառահատման 1 դեպքով (1 թխկի) հաշվարկվել է 20.300 ՀՀ դրամի չափով, վառելափայտի

ապօրինի տեղափոխման 1 դեպքով (3.85 խմ վառելափայտ) հաշվարկվել է 138.600 ՀՀ դրամի չափով:

Վայոց Զոր՝ շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ արմատախիլ արված ծառերի 1 դեպքով (14 ուռենի) հաշվարկվել է 42.000 ՀՀ դրամի չափով:

Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախստման 2 դեպք:

Գեղարքունիք՝ ձկան ապօրինի որսի 1 դեպք (առգրավվել է 30 հատ՝ 15 կգ սիգ տեսակի ծուկ, հանձնվել է Սևանի N 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ) և խեցգետնի ապօրինի որսի 1 դեպք, որի վերաբերյալ վարչական իրավախստման վարույթը գտնվում է քննության ընթացքում:

Մթնոլորտային օդի և ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ

Արձանագրվել է իրավախստման 3 դեպք:

Քննված վարչական վարույթներով նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, որից Երևան առանց անթափանց ծածկոցի շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով: Շիրակ՝ առանց անթափանց ծածկոցի ավագի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով: Արագածոտն՝ առանց անթափանց ծածկոցի ավագի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու համար

Կայացվել է վարչական տուգանքի 1 որոշում. Արագածոտն՝ 1 տնտեսվարողի նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Ընդհանուր առմանը ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պատժամիջոցներից հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 746.860 ՀՀ դրամ:



Պարզաբանում ՀՀ դատախա- զության տարածած հաղոր- դագրության վերաբերյալ

ՀՀ դատախազության կողմից իրավարակված՝ «Ապօրինի ծառահատումների և դրանց հետ գուգորդված պաշտոնեական հանցագործությունների արդյունքում պատճառվել է շուրջ 1.5 միլիարդ ՀՀ դրամի վնաս» վերտառությամբ հաղորդագրության մեջ ներկայացված փաստական տվյալների հետ կապված՝ ընթերցողների մոտ հնարավոր բյուրընկալումներից զերծ մնալու համար պարզաբանում ենք, որ «Դայանուառ» ՊՈԱԿ-ի տարրեր մասնաճյուղերում տևական ժամանակ մեծ ծավալների ծառերի ապօրինի հատումների, ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից այդ հանցագործությունների թողտվության, հովանավորչության, սիստեմա-

տիկ կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառք ստանալու օժանդակության դեպքերի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի, 308-րդ հոդվածի 2-րդ մասի, 311-րդ հոդվածի 2-րդ մասի և 312-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական 4 գործերը հարուցվել են դեռևս 2017թ. հուլիսի 28-ին: Իրենց մեղսագրված արարքներն այդ քրեական գործերով որպես մեղադրյալներ անցնող պաշտոնատար անձինք առերևույթ կատարել են իրենց նախկին պաշտոնավարնան ընթացքում: ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչությունը լուծարվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ: Հետևաբար, նորաստեղծ ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ներկայիս աշխատակիցները առնչություն չունեն նշանակած քրեական գործերի և հանցագործությունների հետ:


2018-ին Եկոտուրիսմների թիվը Հայաստանում 20% կավելանա

NEWS.am-ի փոխանցմամբ՝ Հայաստանը մտադիր է 2017 թվականի համեմատությամբ 2018-ին եկոտուրիսմների թիվը 20 տոկոսով մեծացնել: Այս մասին փետրվարի 7-ին մանուկի ասուլիսի ժամանակ հայտնել է բնապահպանության փոխնախարար Խաչիկ Ջակոբյանը: Նրա խոսքով՝ նույնքան էլ կմեծանան եկոտուրիսմների այցելություններից ստացված եկանուտները: «Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ հատուկ պահպանվող բնական տարածքների կատարելագործումը 2018 թվականին կդառնա նախարարության գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը», - նշեց Խաչիկ Ջակոբյանը՝ շարունակելով, որ այս նպատակի հա-

մար Հայաստանի Բնության պետական թանգարանում ապրիլի վերջին կրացվի եկոտուրիզմի աջակցության տեղեկատվական կենտրոն, որը հնարավորություն կտա այցելուներին ներկայացնել երկրի եկոտուրիստական ամբողջ պոտենցիալը, տեղեկություններ կտրամադրի Հայաստանի հատուկ պահպանվող բնական տարածքների եւ այնտեղ այցելելու շրջանակում տրամադրվող ծառայությունների մասին: «Եկոտուրիզմի զարգացման համար աշխատանքներ են կատարվում նաեւ միջազգային տուրպորտալներում Հայաստանի եկոտուրիստական երթուղիների մասին տեղեկությունների տեղադրման ուղղությամբ, ինչպես նաեւ թարմացվում են Վիքիպեդիայում հրապարակված մեր երկրի հատուկ պահպանվող բնական տարածքների մասին հոդվածները», - նշեց նա:

NEWS.Am

«Արգելոցաղարկային համալիր» ՊՈԱԿ-ը համագործակցության դաշտանագիր է ստորագրել Երևու բոլեցների հետ



Բնապահպանության նախարարության «Արգելոցաղարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Գարբիելյանն այսօր համագործակցության պայմանագիր է ստորագրել Երևու՝ «Երևանի զբոսաշրջության սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Ղազարյանի և «Երևանի էստրադային և զարգային արվեստի պետական քոլեց» ՊՈԱԿ-ի տնօրեն Տիգրան Դավթյանի հետ: Կողմերն ստորագրված փաստաթղթերով որակական նոր հարթության վրա են դրել մինչ այդ ունեցած համագործակցությունը, որը միտված է Եկոլոգության զարգացմանը: «Արգելոցաղարկային համալիր» ՊՈԱԿ-ը պարտավորվել է «Զբոսաշրջության» և «Սպասարկման կազմակերպության» մասնագիտություն ստացող ուսանողների համար կազմակերպել մասնագիտական պրակտիկա, ինչպես նաև բնա-

պահպանական և էկոլոգիական թեմաներով էկոճանաչողական, տուրիզմի և էկոդաստիարակչական դասընթացներ անցկացնել ըստ նախապես նշակված ուսումնական ծրագրի: «Երևանի էստրադային և զարգային արվեստի պետական քոլեց» ՊՈԱԿ-ի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել «Արգելոցաղարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող դենդրոպարկերում անցկացնել կրթամշակության միջոցառումներ: «Արգելոցաղարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լևոն Գարբիելյանը կարևորելով պայմանագրերի ստորագրումը նշել է, որ դրանց շրջանակում նախատեսվող փոխգործակցությունը կնպաստի մատադր սերնդի էկոլոգությանը և ընդհանուրացես հասարակության մոտ բնապահպանական նշակույթի ձևավորմանը: Արգելոցաղարկային համալիրի տնօրենը եկոլոգության գործնքներում նաև կարևոր է արվեստի միջոցների կիրառումը: «Երևանի զբոսաշրջության սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Ղազարյանը կարևոր է եկոզրուաշրջության մեջ նամագիտացող ուսանողների արտադասարանային և գիտապարկատիկ դասընթացների անցկացումը համալիրի գիտական գործ մասնագետների հետ և հանրապետության տարբեր մարզերում գտնվող դենդրոպարկերում:

«Երևանի էստրադային և զարգային արվեստի պետական քոլեց» ՊՈԱԿ-ի տնօրեն Տիգրան Դավթյանը և արվեստի մերձեցումը երկրի զարգացման հիմնական գրավականներից է:

Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի

Խմբագիր՝ Մանվել Սկրչյան

Ձևակողումը՝ Նարինե Բաղդասարյանի

Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կաղերի վարչության

**Հեռախոս՝
011 818 517**